

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Մ. Ա., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.-«Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, 294 +24 էջ ներդիր

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Ա. Հարությունյանի սույն աշխատությունը ներկայացնում է նորօրյա ազգային ազատագրական պայքարի ռազմական փուլի պատմության քննական վերլուծությունը: Այն ամբողջությամբ արժեքավոր գիտական ուսումնասիրություն է, ուր պատմական բազմաթիվ սկզբնաղբյուրների, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված նորահայտ հարուստ արխիվային նյութերի, հրապարակված ժողովածուների, ժամանակի պարբերական մամուլի և թեմային առնչվող պատմագիտական գրականության համակողմանի ուսումնասիրության հիման վրա գիտական պատշաճ մակարդակով լուսաբանված է Արցախյան պատերազմի ամբողջական պատմությունը, սահմանված են պատերազմի հիմնական փուլերը, պարբերացվել է Պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը, վերլուծված են խոշոր ռազմական գործողությունները, տրված են դրանց անցկացման անհրաժեշտությունը, ընթացքը և պատմական նշանակությունը: Հեղինակը չի խուսափել ճակատագրական ձախողումների, ինչպես օրինակ, Գետաշենի ենթաշրջանի, Շահումյանի ու Մարտակերտի շրջանների անկման պատճառները վերհանելուց:

Արցախյան պատերազմի ու ՀՀ ՁՈՒ շինարարության, առանձին միավորումների ու զորամասերի մարտական ուղու վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունների ու դրանց արդյունքների հրատարակման համատեքստում գրախոսվող աշխատությունն ուշագրավ է նաև այն առումով, որ հեղինակը քննության ենթարկած գործընթացների մեծամասնության ականատեսն է ու մասնակիցը, ժամանակին դրանք լուսաբանել է ռազմական գերատեսչության պաշտոնաթերթերում: Վերջին քառորդ դարյա ժամանակամիջոցում շրջանառության մեջ դրված վիթխարի փաստական նյութի ու տեսական մշակումների համապատկերի վրա անգամ «Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.» աշխատությունը պահպանել է իր յուրահատկությունն ու արդիականությունը և կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն հասարակության համար: Ուստի ընդունելի ենք համարում այդ աշխատությունը բնագրային տեսքով որպես վավերագիր հրատարակելու, իսկ լրամշակումն ու բարեփոխումը ապագայի համար թողնելու նպատակահարմարությունը:

Արցախյան շարժման ու պատերազմի, հայոց զենքի փառքը նոր դրվագներով հարստացրած ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծման ու մարտական ուղու պատմության գիտական ուսումնասիրությունը և շարադրումը կարևոր նշանակություն ունեն մեր ոչ հեռու անցյալի մասին ճշմարտությունը հանրահռչակելու, համաշխարհային գիտական համակարգում ինտեգրելու համար: ԼՂՀ միջազգային ճանաչման, հակառակորդի տեղեկատվական պատերազմին դիմագրավելու, պատմության կեղծարարությունները մերկացնելու, Ադրբեջանի նախահարձակման հետևանքով ավերված բազում հայկական բնակավայրերի, այսօր էլ հակառակորդի կողմից բռնազավթված Շահումյանի, Մարտակերտի և Մարտունիու շրջանների մի մասի, Արծվաշենի և հայկական այլ տարածքների չլուծված հիմնախնդիրները պահանջում են հստակ պատկերացում ունենալ նորագույն պատմության, հատկապես հանուն ազատության ու անկախության մեր ժողովրդի մղած պայքարի մասին: Հետևաբար պահանջված է Արցախի ազատագրական պատերազմի, ՊԲ մարտական ուղու և ռազմական հաղթանակների, առհասարակ, բանակաշինության գործընթացի համակողմանիորեն ուսումնասիրումը:

Հեղինակը ԼՂՀ Պաշտպանության բանակի ստեղծումն ու մարտական ուղին դիտարկել է հայ ազգային ազատագրական պայքարի և մասնավորապես 1988-ին սկիզբ առած նրա նոր փուլի համատեքստում, բազմակողմանիորեն ուսումնասիրել, վեր-

լուծության է ենթարկել դրանք՝ կատարելով ոչ հեռու անցյալի վերաիմաստավորման, այն պատմագիտության սեփականությունը դարձնելու օրախնդիր հրամայականը: Փաստորեն, հեղինակին հաջողվել է լուծել Արցախյան պատերազմը և ՊԲ մարտական ուղին գիտականորեն ուսումնասիրելու, թեմայի վերաբերյալ հրապարակումներում առկա էական անճշտությունները շտկելու, մի շարք հարցեր ճշգրտելու խնդիրները: Ընթերցողին է ներկայացվել Արցախյան շարժման պատերազմական փուլի և ՊԲ մարտական ուղու և ստեղծման համակարգված, մի կուռ ամբողջականության մեջ դրված պատմությունը, որի հիմքում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստաթղթեր են՝ դեռևս չգաղտնագերծված փաստաթղթերի ուսումնասիրությունից կատարված համապատասխան եզրահանգումները և ընդհանրապես ռազմագործողությունների՝ լայն հասարակայնության համար չբացահայտված հետաքրքիր մանրամասներն ու արժեքավոր տեղեկությունները: Առանձնահատուկ ու մանրամասն վերլուծության է ենթարկվել մանավանդ Շուշիի ազատագրման ռազմագործողությունը՝ իբրև Արցախյան պատերազմի թագն ու պսակը: Այն ներկայացնելով որպես հայ ռազմարվեստի փայլուն դրվագ, իբրև բեկումնային նշանակություն ունեցած իրադարձություն, հեղինակը համարել է Արցախի ինքնուրույնության ու իրական անկախության սկիզբը, ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև երկուստեք կենսականորեն անհրաժեշտ ցամաքային կապի վերականգնմանը նպաստած գործոն:

Աշխատության մեջ ներկայացված հայ ռազմիկների համընդհանուր հերոսությունը, նվիրվածությունը և խիզախումը սերունդների հայրենասիրական դաստիարակության, ոգեշնչման, նոր սխրանքների կոչելու առատ աղբյուր են: Ավագ սերնդի սխրանքը մերօրա զինվորին սահմաններն ավելի զգոն ու աննկուն հսկելու, արյան գնով նվաճված բնագծերը պաշտպանելու մղում ու լիցք են տալիս:

Արխիվային դեռևս չգաղտնագերծված գործերի, մարտական հրամանների ու կարգադրությունների, մարտական զեկույցների, ռազմագործողությունների մշակման ու աշխատանքային քարտեզների տվյալների ուսումնասիրությունն ու վերլուծությունը հեղինակին հանգեցրել են Արցախյան պատերազմը 4 հիմնական փուլերի պարբերացնելու մտքին:

Առաջին փուլն, ըստ Մ. Հարությունյանի, տևել է 1991 թ. ապրիլի 30-ից մինչև 1992 թ. մայիսի 18-ը: Դրան հաջորդել է 1992 թ. հունիսի 12-ից 1993 թ. հունվարի 20-ն ընկած ժամանակամիջոցն ընդգրկող փուլը: Այնուհետև, երրորդ ու չորրորդ փուլերն են համապատասխանաբար 1993 թ. փետրվարի 5-ից - նոյեմբերի 1-ը և 1993 թ. դեկտեմբերի 15-ից - 1994 թ. մայիսի 17-ը:

Այս պարբերացման շրջանակներում էլ հեղինակը ներկայացրել է Արցախի դեմ Ադրբեջանի ագրեսիայի, «Օղակ» ռազմագործողության, մինչև Շուշիի ազատագրումը մղված պաշտպանական ու ազատագրական մարտերի առանձնահատկությունները: Առանձնապես կարևորելով Շուշիի ազատագրման ռազմագործողությունը՝ հեղինակը մանրամասնորեն վերլուծել է այն՝ տալով դրա նախադրյալներն ու անհրաժեշտությունը, նախապատրաստման փուլերը, ընթացքը, պատմական նշանակությունը և չուսումնասիրված այլ հիմնախնդիրներ: Լաչինի ռազմագործողությունը դիտարկվել է որպես Շուշիի ռազմագործողության տրամաբանական շարունակություն և Մայր Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնման, շրջափակման ճեղքման անհրաժեշտության, կենսական պահանջի արգասիք: Հեղինակը, սակայն, անընդունելի է համարել Շուշիի ու Լաչինի ռազմագործողությունները միավորելու և որպես մեկ ռազմագործողություն ներկայացնելու փորձերը, քանի որ արմատապես տարբերվում էին Շուշիի և Լաչինի ռազմագործողությունների նպատակներն ու խնդիրները: Մյուս կողմից «Շուշիի առումը» մարտական հրամանի, ռազմագործողության «Հարսանիք լեռներում» և «Հրագրան» քարտեզների ուսումնասիրությունը թույլ է տվել նրան միանշանակ պնդելու, որ Լաչինի ազատագրման խնդիր, անգամ թեական, չի դրվել, դեռ ավելին՝ այդ ժամանակ չէր էլ կարող դրվել: Այն վճռման համար ԻՊՈՒ-ին առաջադրվեց Շուշիի ռազմագործողության հաջող ավարտից հետո, դեպքերի բարեհաջող զարգացման և ռազմաքաղաքական բարենպաստ պայմաններում:

Երկրորդ փուլի մասին խոսելիս հեղինակն անհրաժեշտ է համարել տալ Շուշիի ազատագրմանը հաջորդած ինքնահանգստացման, Ադրբեջանի ձեռնարկած երկրորդ լայնածավալ ագրեսիայի ռազմաքաղաքական նախադրյալների, ԻՊՈՒ մղած պաշտպանական ծանր մարտերի մեկնաբանությունները: Հեղինակն առանձնացրել է պաշտպանական ծանր մարտերում հակառակորդի հարվածային ուժերի հյուժնան, դրանով իսկ հայկական տարածքներն ազատագրելու և հակառակորդին ԼՂՀ տարածքից դուրս շարտելու նպատակով ձեռնարկված լայնածավալ հակահարձակման անցնելու համար նախադրյալներ ստեղծելու գործընթացը: Կազմակերպված նահանջի և հակառակորդի ագրեսիայի կասեցման գործում հատկապես կարևորվում է հայ զինվորների ու զորահրամանատարների տոկունության, հայրենի հողը մինչև վերջին հնարավորությունը պաշտպանելու վճռականության, անձնվիրության և այլ որակների դրսևորումը, ինչն օգնեց ռազմական նախաձեռնությունը խլելու և հակառակորդի՝ Մարտակերտի շրջան ներխուժած խմբավորման ջախջախման խնդիրների լուծմանը: Ընդսմին, արմատական բեկման համար հեղինակը վճռորոշը համարել է ոչ թե Ադրբեջանում, մանավանդ նրա ռազմական վերնախավում սկսված ներհակություններն ու հակասությունները, այլ հայ մարտիկների պաշտպանական համառ մարտերը և համարձակ հակազրոհները, որոնց հետևած անհաջողություններն իրենց հերթին խորացրել են այդ հակասությունները...

Երրորդ փուլի կտրվածքով հեղինակի քննության առարկա են դարձել 1993 թ. առաջին կիսամյակում մղված մարտական գործողությունները, հատկապես անվտանգության գոտի ստեղծելու հրատապ խնդրի լուծման նպատակով իրականացված խոշորածավալ հարձակողական ռազմագործողությունները: Հեղինակը գտել է, որ դրանք ևս, ըստ իրենց բնույթի, նպատակների և առաջադրված խնդիրների, կարելի է բաժանել երկու խմբի. ա) **ազատագրական մարտեր**, մասնավորապես Մարտակերտի շրջանի մեծ մասի ազատագրումը 1993 թ. փետրվարի 5-ից հունիսի 26-ն ընդգրկող ժամանակահատվածում, Քելբաջարի ռազմագործողությունը նույն թվականի մարտի 27-ից ապրիլի 5-ի ընթացքում, ինչը թելադրված էր Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող ԻՊՈՒ ստորաբաժանումների թիկունքն ապահովելու, խաղաղ բնակչության վերադարձի անվտանգության, Լաչինի միջանցքի վրա մշտական սպառնալիքի նվազեցման և լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախման անհրաժեշտությամբ: Քելբաջարի շրջանի ազատագրումը կարևոր էր նաև Հայաստանի հետ ցամաքային կապի՝ երկրորդ կյանքի ճանապարհի բացման, ինչպես նաև Օմարի բարձրադիր լեռնանցքում, ռազմավարական առումով նպաստավոր ու տիրապետող բնագծերում ԼՂՀ-ի հյուսիս-արևմտյան սահմաններին հակառակորդի մշտական սպառնալիքին ավելի դյուրությամբ ու հուսալիորեն դիմագրավելու նկատառումներով: Հեղինակը փաստերի ուսումնասիրության և հետագա իրադարձությունների համապատկերի վրա առանձնահատուկ տեղ է հատկացնում Քելբաջարի ռազմագործողությանը՝ գտնելով, որ այն հավասարապես թե՛ անվտանգության գոտու ստեղծման և թե՛ ազատագրական բնույթ ունեւ, քանի որ Քելբաջարի շրջանը հին հայկական տարածք էր և պատմական հիշողության թելադրանքով անհրաժեշտ էր վերջնական ավերումից փրկել հրաշքով պահպանված պատմական հուշարձանները, ինչպես նաև թիզ առ թիզ վերադարձնել կորուսված հայրենի հողը:

Այս ամենի հաշվառմամբ հեղինակը նպատակահարմար է գտել Քելբաջարի ռազմագործողությունը համարել կապող, միջանկյալ օղակ ազատագրական մարտերի և անվտանգության գոտի ստեղծելու նպատակով իրականացված ռազմագործողությունների շղթայի միջև: **բ) ԼՂՀ շուրջ անվտանգության գոտի ստեղծելու նպատակով իրականացված մարտեր:** Այս կտրվածքով լայնորեն լուսաբանված են խոշորածավալ ռազմագործողությունները, հատկապես հայ ռազմարվեստը հարստացրած ու հայոց զենքի փառքը բազմապատկած Ադրամի (1993 թ. հուլիս), Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլիի (1993 թ. օգոստոս), Հորադիզի ու Ջանգելանի (1993 թ. աշուն) հաջող մարտերը:

Արցախյան պատերազմի վերջին փուլի շարահարման ժամանակ հեղինակն աչքի առաջ է ունեցել հակառակորդի ագրեսիան ձմեռային պատերազմաշրջանում իբրև

ռազմական նախաձեռնությունը խլելու, պատերազմում արմատական բեկում մտցնելու, Արցախյան հիմնահարցը զենքի ուժով լուծելու մի վերջին, հուսահատ փորձ: Հակառակորդի պլանների ձախողման և տապալման գործում հեղինակը կարևորում է 2 հիմնական պահ. ա) հարավ-արևելյան ուղղությունում ծանր պաշտպանական մարտերում հակառակորդի հարվածային ուժերի հյուժումը և Քելբաջարի հյուսիսի ու Օմարի լեռնանցքի ազատագրման փայլուն ռազմագործողությունը; բ) մարտական գործողությունների կարևոր ու կենտրոնական հատվածում՝ Աղդամի և Մարտակերտի շրջաններում, ՊԲ-ի սրընթաց հակահարձակումը, ինչն անմիջական սպառնալիքի տակ էր դրել ԼՂՀ-ին սահմանակից ադրբեջանական վերջին խոշոր ռազմակայանը՝ Միր Բաշիրը, և հղի էր Ադրբեջանում նոր իշխանափոխության, քաղաքական սուր ճգնաժամի, հետևաբար՝ ռազմական խորտակիչ պարտության վտանգով: Չնսենացնելով խաղաղարարական-միջնորդական ջանքերի, մանավանդ Ռուսաստանի դերը հրադադարի շուրջ ձգձգված պայմանավորվածություն ձեռք բերելու գործում՝ հեղինակը կարևորում է հակառակորդին ռազմական պարտության մատնելու սպառնալիքով հրադադարի պարտադրման հանգամանքը: Չեն անտեսվում նաև ուժերի հավասարակշռության, պատերազմը հակամարտության գոտու սահմաններից դուրս գալու վտանգներ և այլ գործոններ...

Արցախյան պատերազմի մասին ամբողջական պատկերացում տալու, ՊԲ մարտական ուղին հնարավորինս լրիվ ուրվագծելու մտահոգությամբ, մանավանդ որ դա առաջին փորձերից մեկն է, հեղինակը շարադրել է նաև տեղային նշանակության մարտական գործողությունները, դրանց ժամանակագրությունը ճշգրտելու, ավելի խոշոր ռազմագործողությունների ու իրադարձությունների միջև կապ ստեղծելու նկատառումներով: Ըստ Մ. Հարությունյանի՝ դրա անհրաժեշտությունը թելադրված է նաև նրանով, որ Արցախի տարածքը մեծ չէր, ինչի հետևանքով հարաբերական էին ճակատ ու թիկունք հասկացությունները, քանի որ մշտական ու տևական հրետակոծությունների էին ենթարկվում գրեթե բոլոր սահմանամերձ և ոչ սահմանամերձ բնակավայրերը: Դա գալիս էր նաև Ադրբեջանի վարած պատերազմի բնույթից՝ նպատակ ունենալով հայաթափել Արցախը, հակառակորդի համար էական նշանակություն չունեցող, թե որ բնակավայրն է դարձնում հրետակոծության թիրախ, միայն թե մարդկային ու նյութական կորուստներ պատճառի հայերին: Հետևաբար, հեղինակի խոր համոզմամբ, անգամ տեղային նշանակության մարտերը, վերջին հաշվով այս կամ այն կերպ ազդում էին իրադարձությունների ընթացքի վրա: Ուրեմն, համամիտ ենք, որ դրանք անուշադրության մատնելու դեպքում աշխատությունը նկատելիորեն կտուժեր:

Քանի որ հեղինակի ուսումնասիրության առարկան զուտ պատերազմական գործողություններն են ու ՊԲ մարտական ուղին, ապա նա, խորամուխ չլինելով քաղաքական, դիվանագիտական ձեռնարկումների, հակամարտության կողմ երկրների ներքաղաքական զարգացումների, սոցիալ-տնտեսական կացությանը վերաբերող հարցերի մեջ, անդրադարձել է դրանց այնքանով, որքանով առնչվել են թեմային կամ վճռական ազդեցություն են ունեցել իրադարձությունների ընթացքի վրա:

Պատմաբանը սահմանել է նաև Արցախյան պատերազմում նվաճված հաջողությունների գլխավոր դարբենի՝ ՊԲ-ի ստեղծման հիմնական փուլերը. ա) **1988 թ. – 1992 թ. փետրվարի 24:** Այստեղ դիտարկվել են կամավորական ու ինքնապաշտպանական ջոկատների և աշխարհագորայինների խմբերի ի հայտ գալու, մարտերի բռնում թրծվելու և համապատասխան մարտական փորձ ձեռք բերելու, սպառազինության և այլ հարցերի լուծման, ինչպես նաև կանոնավոր ստորաբաժանումների (վաշտերի) սաղմնավորման հիմնական կողմերը:

բ) **1992 թ. փետրվարի 24 – օգոստոսի 14:** Հեղինակը դիտարկել է տարերայնորեն ձևավորված կամավորական ջոկատներին պետականորեն համապատասխան կարգավիճակ շնորհելու և որպես ԼՂՀ ԻՊՈՒ ճանաչելու ԼՂՀ ԳԽ նախագահության կարևոր ձեռնարկումը՝ բնորոշելով այն իբրև ԻՊՈՒ-ի ստեղծման մեկնակետ:

գ) **1992 թ. օգոստոս – 1993 թ. նոյեմբերի 10:** Այս ժամանակահատվածը հեղինակը բնորոշում է որպես ԻՊՈՒ-ի կազմավորման նոր փուլ: Այդ տեսանկյունից դիտարկվում են

ԻՊՈՒ-ի կազմակերպական-հաստիքային նոր կառուցվածքի անցմելու, կանոնավոր ստորաբաժանումների (գումարտակների, դիվիզիոնների) վերակազմակերպման, ինչպես նաև պաշտպանական շրջանների՝ որպես ավելի խոշոր ռազմական միավորների կազմավորման հիմնահարցերը: Առաջին անգամ հեղինակը հակադրվում է այն տարածում գտած ու համընդհանուր ընդունելության արժանացած, սակայն, ոչ ճիշտ կարծիքին, որ ՊԲ-ն ստեղծվել է 1992 թ. սեպտեմբերի 1-ին: Անառարկելի փաստերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ օգոստոսի 14-ին ԻՊԿ նախագահի համապատասխան հրամանագրի կենսագործման երկար ու դժվարին ճանապարհին սեպտեմբերի 1-ը մյուս օրերից առանձնացել է լոկ նրանով, որ ամսվա սկիզբն էր, ուստի նոր հրամանագրերը գրվեցին և զինռոճիկները սկսեցին հաշվել հենց այդ օրվանից: Ուստի Մ. Հարությունյանի կարծիքով այն լուրջ վերապահությամբ կարելի է ընդունել որպես բանակի սաղմնավորման մեկնակետ, որի համար իրավաբանական հիմք կարող է լինել օգոստոսի 14-ի վերոհիշյալ հրամանագիրը, ինչն էլ հեղինակը համարել է ԻՊՈՒ-ի կազմավորման նոր փուլի սկիզբը:

դ) 1993 թ. նոյեմբերի 10 – 1994 թ. հունվարի 4: Այս փուլը հեղինակի համոզմամբ՝ ՊԲ-ի(որպես ժամանակակից բանակի) ստեղծման ելակետային ժամանակահատվածն է: Ավելի կոնկրետ՝ նոյեմբերի 10-ը հեղինակը համարում է ինքնապաշտպանության ուժերը ՊԲ-ի վերակազմավորելու սկիզբը, իսկ հունվարի 4-ը՝ ԼՂՀ ՊԿ նախագահի կողմից ՊԲ-ի կառուցվածքի հաստատումը՝ ՊԲ-ի ստեղծման ավարտը: Սակայն բանակային շինարարությունը, ինչպես իրավացիորեն կարծում է պատմաբանը, շարունակական ու անդադար գործընթաց է, անկախ նրանից պատերազմ է, թե խաղաղություն: Մանավանդ՝ Հարավ-կովկասյան տարածաշրջանի ու հայկական պետականության պայմանների համար այն ընդհանրապես չի ավարտվի իբրև անվտանգության ու խաղաղության երաշխիք: Բանակաշինության հետպատերազմյան շրջանին հեղինակն անդրադարձել է հպանցիկ՝ հաշվի առնելով թեմայի փակ ու գաղտնի լինելը: Ի դեպ, վերլուծությունների ու մեկնաբանությունների ժամանակ հեղինակը ձգտել է խստորեն պահպանել գաղտնիության, փակագծերը ոչ լրիվ բացելու կանոնները: Հասկանալի է, որ դրա անհրաժեշտությունը գալիս է մեր երկրի անվտանգության, հակառակորդին ավելորդ տեղեկություններ չտալու և ռազմական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով, որ մարտական գործողությունները ժամանակագրական ու փաստական առումներով բավական աղավաղված են, հեղինակն անհրաժեշտ է համարել, թերևս առաջին անգամ, ընդհանրացնելով ու ամբողջական տեսքի բերելով, շտկել դրանք ու դնել գիտական շրջանառության մեջ: Դրանով է բացատրվում մարտական գործողությունների՝ ժամանակագրական առումով առավել ճշգրտված շարադրումը, որից, կարծում ենք, որ աշխատությունը չի տուժել, այլ ինչ որ մի տեղ լրացվել է՝ ամբողջական պատկերացում տալով իրադարձությունների մասին:

Ուսումնասիրությունը կատարելով պահպանված փաստաթղթերի, մարտական հրամանների ու զեկույցների, ռազմական քարտեզների, ինչպես նաև ժամանակի մամուլում և հետագա տարիներին հրատարակված պարբերականներում, հուշագրություններում, զանազան ու տարաբնույթ գրքերում, ամսագրերում առկա նյութերի, դեպքերի մասնակիցների հուշապատումների մանրակրկիտ հետազոտության, փաստերի համադրության և վերլուծության, համեմատությունների ու գիտաքննական զննումների հիման վրա, առաջին անգամ փորձ է ձեռնարկվել տալ Արցախյան պատերազմի ու ՊԲ ստեղծման պարբերացումը, վերականգնել ռազմագործողությունների ընդհանուր պատկերը, մասնակիցների կազմն ու քանակը, հարձակման ուղղությունները, մտահղացումների ու ռազմական խորամանկությունների կիրառումն ու դրանց արդյունավետությունը, նվաճված բազմաթիվ քաղաքական հաղթաթղթերը, հաջողությունների ու ձեռքբերումների գնահատականը, ռազմագործողությունների արդյունքները և պատմական նշանակությունը: Այս ամենի վերհանումը շահավետորեն արդյունավետ կարող է լինել մասնակիցների և իրադարձությունների հերոսների անաչառ վերաբերմունքի ու քննարկումների պայմաններում...

Գրախոսվող աշխատությունը, լինելով Արցախյան պատերազմի և ՊԲ մարտական ուղու անդրանիկ գիտական ուսումնասիրությունը, բնականաբար, չի կարող գերծ լինել թերություններից: Այդուհանդերձ, այն կարևոր է այն առումով, որ կարող է հիմք լինել հետագա ուսումնասիրությունների համար և վերջ տալ սիրողական մակարդակով ստեղծված գրականության «մենաշնորհին» և թեմային անդրադառնալիս ուսումնասիրողները ստիպված չեն լինելու ժամանակ վատնել ոչ գիտական նյութերի վրա:

Աշխատությունը գրված է անաչառ ու անկողմնակալ, պատմական ճշմարտության գերակայությամբ: Ուսումնասիրությունը կատարվել է պատճառների վերլուծությամբ, օրինաչափությունների հաշվառմամբ: Չեղինակը, պատերազմի ամենաեռուն շրջանում լինելով զինվորական թղթակից, ռեպորտաժներ է պատրաստել անմիջապես մարտական գործողությունների գոտուց, հաճախ հենց առաջին գծից՝ առիթ ունենալով պատմության համար հավաքել նյութեր, գրի առնել մասնակիցների թարմ տպավորությունները, զնալ իրադարձությունների ու հերոսների թարմ հետքերով: Զինվորական մասնագիտության բերումով նա հանդիպել ու զրուցել է պատերազմի հարյուրավոր մասնակիցների հետ, գրի առել նրանց հուշերն ու մեկնաբանությունները:

Չեղինակի դատողությունները, մտքերը, կարծիքն ունեն իրական, անշուշտ ոչ վերացական հենք: Նրա իրազեկվածությունը գալիս է նաև նրանից, որ նա մասնակիցն է եղել մի շարք մարտերի ու ռազմագործողությունների, ուստի դրանց մասին նրա վերարտադրածը արժանահավատ է, ավելի առարկայական, ուստի պատերազմը, ինչպես նաև ՊԲ մարտական ուղին ու նրա ստեղծման պատմությունը խորն են ըմբռնված ու ներկայացված ուշագրավ մանրամասներով:

Նկատի առնելով, որ իր բնույթով եզակի աշխատանքը կարող է որպես սկզբնաղբյուր ծառայել հետագա ուսումնասիրողների համար, հեղինակը զգուշությամբ ու պատասխանատվությամբ է մոտեցել փաստերի ընտրությանը և դրանք օգտագործել քննադատաբար՝ առաջնորդվելով փաստերի համադրման ու համեմատության մեթոդով:

Գրախոսվող աշխատության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի, ԼՂՀ պաշտպանության նախարարության արխիվի, ԼՂՀ պետական և ԱԺ ընթացիկ արխիվների՝ թեմային առնչվող սակավաթիվ նյութերը, պատերազմի մասնակիցների վկայություններն ու հուշագրությունները, ժամանակի պարբերական մամուլը, Ազատամարտին նվիրված տպագիր գրականության մեծ մասը: Առաջին անգամ օգտագործվել ու գիտական շրջանառության մեջ են դրվել բացառիկ փաստաթղթեր և ռազմական քարտեզների տվյալներ, ԼՂՀ նախարարների խորհրդի և ԳԽ նախագահության որոշումների արձանագրություններ և այլն:

ԼՂՀ պաշտպանության բանակի օպերատիվ հերթապահի աշխատանքային տետրերի, ռադիոկայանի ապարատային մատյանների, մարտական հրամանագրերի, օպերատիվ հաղորդագրությունների ու հեռախոսագրերի, ռազմական քարտեզների, մարտական զեկույցների, ինչպես նաև արխիվային նյութերի, առկա գրականության ու ժամանակի մամուլի մանրազնին ուսումնասիրության, դեպքերի մասնակիցների, ականատեսների վկայությունների, օրագրային գրառումների հիման վրա ատենախոսության հեղինակը փորձել է տալ 1991թ. ապրիլից մինչև 1994 թ. մայիս տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքը՝ առավելս ճշգրտված ժամանակագրությամբ: Միաժամանակ, զուգահեռներ անցկացնելով և վերլուծելով ռազմաքաղաքական առավել կարևոր իրադարձությունները, նա նպատակ է ունեցել վերաիմաստավորել անցյալը, պատմահամեմատական մեթոդով սրբագրել ազատամարտի թեմայով գրվածքներում ցայսօր թույլ տրված սխալներն ու վրիպումները:

Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ- պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ-պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր